



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

6 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 138-Ա
ք. Երևան

«ԱՐԵՎ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՏՐԱԳՐԵՐԻ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԵՄՈՒՍԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 4-ի «Հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 51-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով «ԱՐԵՎ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊ ընկերության հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստանալու մասին 2019 թվականի հոկտեմբերի 31-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Մերժել «ԱՐԵՎ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊ ընկերության դիմումը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) Պարտադիր ներկայացման ենթակա փաստաթղթերից չեն ներկայացվել ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր և տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների ու սարքավորումների մասին:

2) Գործարար ծրագրում բացակայում են որոշակի ժամանակահատվածի համար կանխատեսված եկամտի և դրամական հոսքերի վերաբերյալ հաշվարկներ՝ բաժանորդների փուլային ներգրավման գործընթացի կանխատեսումը, այդ փուլերին համապատասխան կատարվելիք ծախսերը և ակնկալվող եկամուտները, Ընկերության

կողմից նախատեսված բաժանորդավճարի հետ կապված ծախս-եկամուտ հարաբերակցության վերլուծությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱՐԵՎ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊ ընկերությանը ծանուցելուց մեկ օր հետո:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ այն ստանալու օրվանը հաջորդող մեկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

Վ. ՕՅԱՆՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 6
ք. Երևան